ՓՈՌ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Մովսես Բաղալյան

Հեռախոս՝ +374. 94393388

Փոռ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում՝ Վայքի լեռների հյուսիսային փեշերին, Արփա գետի ձախ կողմում, մարզկենտրոն Եղեգնաձորից 27 կմ հարավ-արևելք։

Ծովի մակերևույթից գտնվում է 1510 մ բարձրության վրա։ Կլիման մերձարևադարձային է, ձմռանը՝ ցուրտ, ամռանը՝ զով։

Գյուղը վերաբնակեցվել է 1928 թվականին Խոյի Սավրա գյուղից ներգաղթած հայ ընտանիքներով։ Ունի 1934 հա տարածք, սահմանակից է մարզի Զառիթափ, Մարտիրոս և Ազատեկ գյուղերին։

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ։

Փոռի տարածքում են գտնվում Սբ. Աստվածածին (1910 թ.), եռանավ բազիլիկ (1830 թ.) եկեղեցիները և XIII-XIV դարերի խաչքարեր։

Գյուղն ունի բուժկետ և առևտրի կրպակ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Փոռ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 2 հուշարձան։